

Հարց

Ե՞րբ չի ընդունվում ուսումնասիրության ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ստանալու համար ներկայացված հայտը:

Պատասխան

Հայտը չի ընդունվում ուսումնասիրության, եթե՝

ա) նրանում ընդգրկված փաստաթղթերը չեն համապատասխանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և «Ջրային համակարգի օգտագործման թույլտվության տրամադրման կարգը հաստատելու մասին» կարգով սահմանված պահանջներին.

բ) ներկայացված փաստաթղթերում առկա են անճշտություններ եւ անհամապատասխանություններ.

գ) Հայտատուն, օրենքի կամ իր կանոնադրության համաձայն, իրավունք չունի զբաղվելու հայցվող թույլտվությամբ նախատեսված գործունեության տեսակով:

(Ա.Գևորգյան)